ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.08.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/64

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, քննելով «Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի կարիքների համար համակարգչային տեխնիկայի և օժանդակ սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Լանար Սերվիս» ՍՊԸ-ի կողմից 21.07.2020թ. ներկայացված (22.07.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/64 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Լանար Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Լանար Սերվիս» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 21.07.2020թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

1. Բողոքի նախապատմությունը

«1.1«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամը իր կարիքների համար՝ համակարգչային տեխնիկա և օժանդակ սարքավորումներ ձեռքբերելու նպատակով հայտարարել է թիվ «ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

1.2 Ի թիվս այլ մասնակիցների, Ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել նաև «Լանար Սերվիս» ՍՊ ընկերությունը, որը ստացել է գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 11.06.2020թ. N 3 որոշմամբ հաստատված հայտարարությունը և հրավերը (այսուհետ՝ Հրավեր):

1.3 Հրավերը պարունակել է «Տեխնիկական բնութագիր-ժամանակացույց», որի 3-րդ չափաբաժնում նշված է եղել «Անխափան սնուցման աղբյուրներ» անվանումով օժանդակ սարքավորումը՝ միջանցիկ ծածկագիրը 31151120 /1 (այսուհետ՝ Գնման առարկա):

1.4 Գնման առարկայի տեխնիկական բնութագիրը ներկայացված է եղել կից և բառացիորեն պարունակել է հետևյալ տեղեկությունները. «Անխափան սնուցման աղբյուրներ. APC-SRT10KRMXLI, կամ համարժեքը, մաքսիմալ հզորությունը 10.0 կվտ/10.0 կՎԱ: Աշխատանքային բարձրությունը տատանվում է ծովի մակարդակից 0-3000 մետր: Ակնկալվող մարտկոցի կյանքը 3-5 տարի: Երաշխիքը 3-5 տարի:»

1.5 Ընկերությունը առավել ցածր գնային առաջարկով Հանձնաժողովին ներկայացրել է Գնման առարկան՝ հետևյալ նկարագրով. «Ապրանքային նշան՝ Պարուս Էլեկտրո, մոդել СИПБ15КД.9-31 с 1 фазой на входе, Батарейный модул БМСИПБ15-20КД, Рельсы для монтажа Rail Kit 19, 3U, մաքսիմալ հզորությունը 13.5 կվտ/15.0 կՎԱ: Աշխատանքային բարձրությունը տատանվում է ծովի մակարդակից 0-3000 մետր: Ակնկալվող մարտկոցի կյանքը 3 տարի: Երաշխիքը 3 տարի:»

1.6 Հանձնաժողովը իր 06.07.2020թ. արձանագրությամբ հետաձգել է Ընթացակարգի արդյունքների ամփոփումը և արձանագրել, որ Ընկերության կողմից ներկայացած ապրանքը համարժեք չէ պահանջված ԱՍԱ-ի հետևյալ պարամետրերով.

ա) Պահանջվել է 10 կվա/10 կվտ հզորությամբ ԱՍԱ, ներկայացվել է 15 կվա/13,5 կվտ

բ) Առաջարկվող կուտակային մարտկոցները ներկառուցված չեն և մատակարարվում են առանձին,

գ) Առաջարկվող ԱՍԱ-ն չունի ավտոմատ ինքնադիագնոստիկայի հնարավորություն, որի միջոցով ժամանակին հայտնաբերվում և փոխարինվում է վնասված կուտակչային մարտկոցները,

դ) Պահանջված ԱՍԱ-ն ունի թվով 10 էլ. վարդակներ տարբեր սարքեր միացնելու համար, առաջարկվող ԱՍԱ-ի վրա դրանք առկա չեն,

ե) Մուտքային լարման տիրույթը պահանջված ԱՍԱ-ի պարագայում 160-275 Վ է, իսկ առաջարկվածինը՝ 208-478Վ

զ) Պահանջված ԱՍԱ-ն հնարավորություն ունի նաև միացնելու հոսանքի գեներատորներին, իսկ առաջարկվող ԱՍԱ-ի պարագայում այդ հնարավորության մասին արտադրողի կողմից նշում առկա չէ:

1.7 Արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հետո Ընկերությունը ներկայացրել է Գնման առարկայի նոր նկարագիր՝ հետևյալ բնութագրերով. «Ապրանքային նշան՝ Պարուս Էլեկտրո, մոդել СИПБ 10КД.9-11, БМСИПБ6-10КД, монтажный комплект рельс, 3U для 19 стойки, карта удаленного управления SNMP BY506, блок розеток Rem 32 с авт. и амп., 3 IEC 60320 C13, 3 IEC 60320, C 19,32 A, алюм. 19, колодка ВВГ нг, Ls 3X4, մաքսիմալ հզորությունը 13.5 կվտ/15.0 կՎԱ: Աշխատանքային բարձրությունը տատանվում է ծովի մակարդակից 0-3000 մետր: Ակնկալվող մարտկոցի կյանքը 3 տարի: Երաշխիքը 3 տարի:»

1.8 Հանձնաժողովը 13.07.2020թ. արձանագրությամբ ամփոփել է Ընթացակարգի արդյունքները և արձանագրել, որ Ընկերության կողմից ներկայացած ապրանքը կրկին համարժեք չէ պահանջված ԱՍԱ-ի հետ հետևյալ պարամետրերով.

ա) Պահանջվել է 10 կվա/10 կվտ հզորությամբ ԱՍԱ, ներկայացվել է 10 կվա/9կվտ

բ) Առաջարկվող կուտակային մարտկոցները ներկառուցված չեն և մատակարարվում են առանձին,

գ) Պահանջված ԱՍԱ-ն հնարավորություն ունի նաև միացնելու հոսանքի գեներատորներին, իսկ առաջարկվող ԱՍԱ-ի պարագայում այդ հնարավորության մասին արտադրողի կողմից նշում առկա չէ:

դ) Իմպուլսային գերլարումներից, այդ թվում՝ առաջացած կայծակների և այլ բնական երևույթների հետևանքով, էլեկտրական սնուցման համակարգի վրա ծանրաբեռնվածությունից պաշտպանություն առկա չէ:

ե) Բարձրավոլտ իմպուլսներից պաշտպանություն առկա չէ,

զ) Ելքային միակցիչները՝

- IEC jumpers (մարտկոցային ռեզերվային սնուցում) - առկա չէ,

- IEC 320 C 13 (մարտկոցային ռեզերվային սնուցում)-6 հատի փոխարեն 2 հատ է,

- Hard Wire 3-wire (HN+G) (մարտկոցային ռեզերվային սնուցում)- առկա չէ,

- IEC 320 C 19 (մարտկոցային ռեզերվային սնուցում)- առկա չէ,

1.9 Նույն արձանագրության 2-րդ կետով Հանձնաժողովը 3-րդ չափաբաժնով հաղթող է ճանաչել այլ կազմակերպության և տվել է հայտարարություն՝ ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/11 ծածկագրով պայմանագիր կնքելու որոշման մասին:

2. Բողոքի իրավական հիմքերը

2.1 Սույն բողոքը բերվում է Հանձնաժողովի կողմից Գնման առարկայի բնութագրում պարունակվող մի շարք դրույթների վերաբերյալ կամայական մեկնաբանություններ տալու, սկզբնապես տեքստում բացակայող՝ սակայն հետո հանձնաժողովի արձանագրություններում անհասկանալիորեն ի հայտ եկած որոշ այլ պարամետրեր առբերելու և ակնհայտ հայեցողական բնույթի ու հակամրցակցային գործողություններ հիմքով:

2.2 Հանձաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթներ, որոնք իրենց համակցության մեջ հանգեցրել են գնման գործընթացի սկզբունքների խաթարմանը, անբարեխիղճ մրցակցության ի հայտ գալուն և արդյունքում՝ Ընկերության իրավունքների խախտմանը:

2.3 Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

2.4. Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

2.5 Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ արգելվում է փոփոխել պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների

բնութագրերը:

2.6 Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

2.7 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

3. Բողոքի փաստացի հիմքերը.

3.1. Պատվիրատուն Գնման առարկայի բնութագրում նշվել է կոնկրետ ֆիրմային անվանում՝ APC (American Power Conversion), ինչպես նաև մոդել՝ SRT10KRMXLI: Ընկերության համար սկզբնապես էլ պարզ չի եղել, թե Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջի իմաստով ինչու է անհնար եղել բնութագրել Գնման առարկան՝ առանց կոնկրետ ֆիրմային անվանման և մոդել նշելու, մանավանդ, որ Գնման առարկան որևէ առանձնահատուկ ապրանք չի հանդիսանում, դրա նշանակությունը և օգտագործման նպատակը առավել քան պարզ է՝ անխափան սնուցման սարք, որը ավտոմատ միանում է հոսանքի անջատման դեպքում և կուտակիչների հաշվին ժամանակավոր ապահովում սնուցում, դրա արտադրությամբ զբաղվում են տասնյակ կազմակերպություններ, իսկ այս տեսակի սարքերը միմյանցից ընդհամենը տարբերվում են իրենց տեխնիկական անձնագրերի տվյալներով՝ հզորություն, ցանցային լարման թույլատրելի սահմաններ, ելքերի քանակ և այլ զուտ տեխնիկական բնութագրիչներ: Այլ խոսքով, գնման առարկայի բնութագրման որևէ անհնարինության մասին խոսք լինել չէր կարող, որևէ հղում չպետք է արվեր, Գնման առարկան պետք է նկարագրվեր միայն պատվիրատուի կարիքներից բխող՝ վերը նշված տեխնիկական անձնագրում պարունակվող հատկանիշներով:

3.2 Այնուամենայնիվ, Պատվիրատուն Գնման առարկայի բնութագրում ձևական-իրավական առումով պահպանել է Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ «կամ համարժեքի» նշման վերաբերյալ պահանջը, ուստի Ընկերությունը ելակետ է ընդունել այն պարզ տրամաբանությունը, որ բնութագիրը պարունակում է ապրանքի վերաբերյալ ընդհամենը 4 տեխնիկական հատկանիշներ, որպիսիք թվարկված են

սպառիչ, ուստի ողջամիտ է կանխավարկածն առ այն, որ Պատվիրատուի համար նշանակություն ունեցող՝ Գնման առարկայի այլ հատկանիշներ, բացի թվարկված 4-ից, չկան:

3.3 Ասվածը ուղղակիորեն բխում է Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի իրավակարգավորումներից, որոնց համաձայն՝ Գնման առարկայի բնութագրերը.

- ամբողջությամբ և հստակ նկարագրում են ձեռք բերվող ապրանքի, ծառայության հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը,

- ներառում են գնման առարկայի տեխնիկական տվյալների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

- հատկանիշները ներկայացվում են բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

- հատկանիշները հնարավորինս ներառում են գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը:

3.4 Այլ խոսքով, Պատվիրատուն Օրենքի ուժով պարտավոր է Գնման առարկայի բնութագրերը կազմելիս՝ դրանցում ներառել հենց այնքան հատկանիշներ, որքան որ էական և անհրաժեշտ են իր կարիքները բավարարելու համար, իրենց համակցության մեջ ամբողջական են և հստակ, բավարար չափով ճիշտ, ընկալելի, կանխատեսելի, տարակերպ մեկնաբանության առիթ չտվող, և որոնք թույլ են տալիս բարեխիղճ վաճառողին՝ Պատվիրատուի կարիքը նույնականացնել և համապատասխան ապրանքային առաջարկ անել հենց այդ՝ թվարկված հատկանիշներով, ծավալով, որակով, քանակով և այլ բնութագրիչներով:

3.5 Չնայած վերը ասվածին, Հանձնաժողովը իր արձանագրությամբ մատնանշել է Ընկերության ներկայացրած Գնման առարկայի այնպիսի ենթադրյալ հատկանիշների (տեխնիկական բնութագրերի) վերաբերյալ անհամապատասխաննություններ, որոնք ի սկզբանե որևէ կերպ արտացոլված չեն եղել Հրավերով սահմանված Գնման առարկայի բնութագրում, այսինքն՝ որևէ աղերս չունեն դրանում նշված 4 տեխնիկական հատկանիշների հետ:

3.6 Հարկ է նշել, որ Հանձնաժողովը թվարկված անհամապատասխանությունները առբերել է սպառիչ ցանկով, այսինքն նշվել են կոնկրետ անվանումներով թվով 6 թերություններ, սակայն ինչպես պարզ կդառնա ստորև շարադրանքում, շուտով պարզվել է, որ այդպիսիք ավելի շատ են, որոնք միգուցե Հանձնաժողովը «մոռացել էր» առաջին

անգամ թերություններն արձանագրելիս: Ընդ որում՝ դրանցից միայն մեկն է եղել Գնման առարկայի 4 հատկանիշների թվից, այն է՝ սարքի մաքսիմալ հզորությունը, որը սակայն իր թվային արժեքով ակնհայտ ավելի բարձր է եղել բնութագրում նշվածից, ինչը բնականաբար մեծ և խիստ ցանկալի առավելություն է մարտկոցով աշխատող սարքի համար (10 կվա/10 կվտ-ի փոխարեն Ընկերությունն առաջարկել է 15 կվա/13,5), մինչդեռ անգամ դա չի գոհացրել Հանձնաժողովին և արդյունքում նշվել է որպես անհամապատասխանություն:

3.7 Ընկերությունը շտկելով նշված անհամապատասխանությունները, սակայն իրավաչափորեն կրկին մնալով հրավերով սահմանված Գնման առարկայի բնութագրի շրջանակներում, այսինքն՝ առաջնորդվելով ելակետային 4 հատկանիշներով, Հանձնաժողովին ներկայացրել է Գնման առարկայի նոր նկարագիր, որում արդեն փոխված է եղել առավելագույն հզորության ցուցիչը՝ 10 կվա/9կվտ:

3.8 Հանձնաժողովը, հավանաբար որոշած լինելով ամեն դեպքում մերժել Ընկերության հայտը՝ այս անգամ ևս կամայական մեկնաբանություն է տվել Գնման առարկայի բնութագրի ձևակերպումներին՝ կրկին որպես թերություն արձանագրելով նոր բնութագրով ներկայացրած առավելագույն հզորության ցուցիչը (10 կվա/9կվտ), որի երկրորդ բաղադրիչը 1 միավոր թվային արժեքով ցածր է եղել պահանջվածից, իսկ առաջին անգամ՝ ավել է եղել 3,5 միավորով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրում ենք այն հանգամանքի վրա, որ Գնման առարկայի բնութագրում սարքի հզորության առնչությամբ նշված՝ «մաքսիմալ» բառը, որի հայերեն համարժեքը «առավելագույն» բառն է, ենթադրում է ինչ-որ բանի վերին սահման, շեմ, որը չի կարող գերազանցվել, ուստի բառի բացատրական իմաստով՝ այդ սահմանը չխախտող ցանկացած մեծություն պետք է համարվի թույլատրելի և իրավաչափ: Օրինակ, ՃԵԿ-ի կանոններով բնակավայրում սահմանված է առավելագույնը 60 կմ/ժ արագություն, ուստի խախտում է համարվում դրանից բարձր արագությամբ երթևեկելը, մինչդեռ դրանից ցածր արագությամբ երթևեկելը չի կարող որակվել խախտում: Տվյալ դեպքում, Ընկերությունը երկրորդ անգամ ներկայացրել է Գնման առարկայի հզորության այլ ցուցիչ՝ 10 կվա/9կվտ, որը ինչպես արդեն նշվեց, 1 միավորով պակաս է եղել սահմանված 10 կվա/10կվտ, այսինքն՝ չի գերազանցել պահանջվող առավելագույն շեմը, մինչդեռ Հանձնաժողովը եղել է այլ կարծիքի, որը որևէ կերպ չի հիմնավորվել:

3.9 Հանձնաժողովը, արդեն երկրորդ անգամ անհամապատասխանություններ արձանագրելիս, այնուամենայնիվ «պարզել է», որ Ընկերության կողմից առաջարկվող Գնման առարկայի և Հրավերով սահմանված Գնման առարկայի բնութագրիչների տարբերությունն իրականում ավելի մեծ է, ինչի արդյունքում դրանց ցանկը ընդլայնվել է՝ հասնելով 9-ի: Մասնավորապես, առաջին անգամ արձանագրված որոշ թերություններ, որոնք Ընկերությունը ըստ էության չի վերացրել, առանց որևէ հիմնավորման դուրս են եկել անհամապատասխանությունների երկրորդ ցանկից, մինչդեռ դրանք շարունակել են գոյություն ունենալ, որովհետև վերացված չեն եղել: Դրա փոխարեն, Հանձնաժողովը արձանագրել է նոր թերություններ, որպիսիք առկա չեն եղել առաջին ցանկում: Ավելորդ չէ նշել, որ այս առթիվ որևէ մեկնաբանություն կամ պարզաբանում Հանձնաժողովը որոշումներում չի տվել:

3.10 Այս ամենը մեր համոզմամբ վկայում է Հանձնաժողովի կանխակալ, կամայական, ոչ անաչառ և հայեցողական մոտեցումների մասին, որոնք ուղղակի անկանխատեսելի են դարձնում գնման ողջ գործընթացը, և դրա մասնակիցների համար առաջացնում չհիմնավորված ռիսկեր, նյութական և ժամանակային կորուստներ և վերջին հաշվով՝ անհավասար մրցակցության միջավայր:

Ստեղծվում է այնպիսի տպավորություն, որ իրականում Պատվիրատուն, ի սկզբանե նպատակադրված է եղել ձեռք բերել հենց կոնկրետ արտադրողի և մոդելի սարքավորում՝ APC-SRT10KRMXLI, որն էլ նշվել է Գնման առարկայի բնութագրում, սակայն ստիպված է եղել ձևականորեն պահպանել Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը, այն է՝ նշել նաև Գնման առարկայի համարժեքի մասին: Ակնհայտ է, որ անգամ այդ պարագայում՝ Պատվիրատուին ոչինչ չէր խանգարում նախապես բարեխիղճ գտնվել և Գնման առարկայի բնութագրում թեկուզ ամբողջ ծավալով (բոլոր անձնագրային հատկանիշներով) արտատպել APC-SRT10KRMXLI մոդելի բնութագրիչները, որպեսզի գնմանը մասնակցող որևէ կազմակերպությունը չհայտնվեր թյուրիմացության մեջ, և բոլորին պարզ լիներ, որ Պատվիրատուն իրականում ցանկանում է ձեռք բերել հենց կոնկրետ մոդելի անխափան սնուցման սարքավորում, դե իսկ Օրենքով նախատեսված համարժեքի գաղափարն էլ վերածվեր պարզ ձևականության:

Այսքանով հանդերձ, Պատվիրատուի կողմից ստեղծված Հանձնաժողովն էլ պետք է ամեն ինչ աներ, որպեսզի բացի նշված կոնկրետ արտադրողի մոդելից, որևէ այլ համարժեք Գնման առարկա ներկայացնող մրցույթի մասնակից չկարողանա հաղթել

մրցույթը՝ անգամ ավելի նվազ գնային առաջարկով: Օրինակ, եթե նույնիսկ ներկայացվեր համարժեք այնպիսի Գնման առարկա, որի տեխնիկական բնութագրիչները 100 տոկոսով համապատասխանեին APC-SRT10KRMXLI մոդելին, սակայն ասենք համարժեք սարքավորման գաբարիտները մի քանի սանտիմետրով գերազանցեին պահանջվող մոդելին, ապա Հանձնաժողովը տեսականորեն կարող էր անհամապատասխանություն արձանագրել նաև այդ մասով, քանի որ կպարզվեր, որ Պատվիրատուն նախապես պատվիրել է սարքավորման տեղադրման համար պահարան՝ հենց APC-SRT10KRMXLI մոդելի գաբարիտներին խիստ համապատասխան»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել «ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին.

1. Վերացնել 13.07.2020թ. նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետով կայացրած որոշումը՝ «Լանար Սերվիս» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասով,

2. Վերացնել «ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/11» ընթացակարգի ծածկագրով պայմանագիր կնքելու որոշումը 3-րդ չափաբաժնի մասով,

3. Ընդունել այդ չափաբաժնի մասով «Լանար Սերվիս» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին համապատասխան որոշում:

Այնուհետև 29.07.2020թ. Ընկերության կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է գրություն, համաձայն որի՝ խնդրել է «Լանար Սերվիս» ՍՊԸ-ի կողմից 21.07.2020թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 31.07.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. «Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Ի պատասխան Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի՝ 22.07.2020թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/10949-2020 գրության՝ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացնելու պահանջի վերաբերյալ, «Ա.Ի.

Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամը (հետայսու նաև՝ Պատվիրատու) 03.08.2020թ. թիվ 01-14/177 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր ս.թ. հուլիսի 22-ի թիվ ԲՔԱ-ԳՆ/2/10949-2020 գրության կից ներկայացնում եմ «ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով «Լանար Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում 3-րդ չափաբաժնով նախատեսված անխափան սնուցման աղբյուր տեսակի ապրանքը տեխնիկական վրիպակի պատճառով չի ներառվել ս.թ. մայիսի 8-ին տեղեկագրում հրապարակված գնումների փոփոխված պլանում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲՔԱ-ՆԳ-2020/64 ընթացակարգի շրջանակներում 31.07.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/64 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/64 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի կարիքների համար համակարգչային տեխնիկայի և օժանդակ սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել են ***19.06.2020թ.***:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Լանար Սերվիս» ՍՊԸ-ի՝ 21.07.2020թ. ներկայացրած բողոքը և բողոքը առանց քննության թողնելու 29.07.2020թ. միջնորդությունը, ինչպես նաև «Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի՝ 03.08.2020թ. ներկայացրած դիրքորոշումը և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ **տեղեկագիրը** նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները**, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն **հրապարակում է տեղեկագրում**, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում.

2) **գնման գործընթացի կազմակերպում** (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը).

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է**, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետը սահմանում է, **որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ <u>նաև հրապարակված,</u> գնումների պլանի առկայությունն է:**

Ընկերության կողմից 29.07.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է միջնորդություն, համաձայն որի՝ խնդրել է «Լանար Սերվիս» ՍՊԸ-ի կողմից 21.07.2020թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, հաշվի առնելով «Լանար Սերվիս» ՍՊԸ-ի կողմից 21.07.2020թ. ներկայացված՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/64 բողոքն առանց քննության թողնելու մասին միջնորդությունը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի 22-րդ կետը՝ ***30.07.2020թ. որոշում է կայացրել ԳԲՔԱ-ՆԳ-2020/64 բողոքը որպես ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգ համարելու վերաբերյալ:***

Այսպես՝ «Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի կարիքների համար համակարգչային տեխնիկայի և օժանդակ սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվել են ***<u>19.06.2020թ.:</u>***

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, բողոքի քննության շրջանակներում, /ԲՔԱ-ԳՆ/2/10949-2020 գրությամբ Պատվիրատուին ներկայացրել է պահանջ սույն բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը տրամադրելու վերաբերյալ:

Պատվիրատուն 03.08.2020թ. թիվ 01-14/177 գրությամբ տրամադրել է անհրաժեշտ փաստաթղթերը և միաժամանակ հայտնել, ***<u>որ «ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում 3-րդ չափաբաժնով նախատեսված անխափան սնուցման աղբյուր տեսակի ապրանքը տեխնիկական վրիպակի պատճառով չի ներառվել ս.թ. մայիսի 8-ին տեղեկագրում հրապարակված գնումների փոփոխված պլանում</u>***:

Ուսումնասիրելով Պատվիրատուի կողմից 08.05.2020թ. տեղեկագրում հրապարակված 2020թ. գնումների պլանը՝ արձանագրում եմ, որ ***«ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով գնման ընթացակարգի Հրավերի պայմանագրի նախագծի Հավելված 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 3-րդ չափաբաժնով նախատեսված «Անխափան սնուցման աղբյուրներ, CPV 31151120/1» ապրանքը ներառված չէ նշված գնումների պլանի մեջ, ուստի գտնում եմ, որ «ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով գնման ընթացակարգը 3-րդ չափաբաժնի մասով կազմակերպվել է առանց իրավական հիմքի***, որի արդյունքում խախտվել են գնման գործընթացի կազմակերպման «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները, հետևաբար Ընթացակարգը 3-րդ չափաբաժնի մասով պետք է հայտարարվի չկայացած:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընթացակարգը 3-րդ չափաբաժնի մասով ի սկզբանե կազմակերպվել է առանց իրավական հիմքի, ուստիև այն հայտարարվում է չկայացած, հետևաբար նման պայմաններում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն որոշման շրջանակներում քննության առարկա չի դարձնում բողոքով վիճարկվող Ընկերության հայտը մերժելու իրավաչափության հարցը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Լանար Սերվիս» ՍՊԸ-ի կողմից 21.07.2020թ. ներկայացված բողոքը՝ որպես 30.07.2020թ. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգ, մերժել:

2. Պարտավորեցնել «ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունելու որոշում՝ Ընթացակարգը 3-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**